Գ. ՏԱՐԻ Թիւ 825 ՇԱԲԱԹ 4 ՀՈԿՏԵՄԲԵՐ 1886 (Ն. Տ.) 16 ՀՈԿՏԵՄԲԵՐ 1886 17 ՄՈՒՀԱՐՐԷՄ 1304

40 ՓԱՐԱ.

ԱՌ ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ ԱՐԵՒԵԼՔ ՕՐԱԳՐԻ
Ղալաթիա, Նորատունկեան-խան

Direction du journal AREVELK
*Noradounghian Han, Galata*
CONSTANTINOPLE

# ԱՐԵՒԵԼՔ

## ՕՐԱԳԻՐ

### ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԱԶԳԱՅԻՆ

40 ՓԱՐԱ.

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Կ. Պոլսոյ համար տարեկան ... 200
» » վեցամսեայ ... 100
» » եռամսեայ ... 50
Գաւառաց ... տարեկան ... 240
Գաւառաց համար ... վեցամսեայ ... 120
Օտար երկիրներ, տարեկան ֆրանք ... 56
» » վեցամսեայ ... 28

Les annonces sont reçues à l'Eastern Agency place Karakeuy Deïrmen Han Constantinople.

Կ. ՊՈԼԻՍ, 3 ՀՈԿՏԵՄԲԵՐ, 1886

## ԱԶԳԱՅԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

### ՀԱՅՐԵՆԱԳԻՏՈՒԹԻՒՆ

Միքայէլ էֆ. Աճեմեան, թարգման և գրագննիչ Մէարիֆի, շաբթուս մէջ հրատարակեց «Օսմանեան Պատմութեան» գրքոյկ մը, «ի պէտս ազգային վարժարանաց»։ Օսմ. Տէրութեան սկզբնաւորութենէն մինչեւ Սուլթան Ապտ-իւլ-Մէճիտի մահը, Թուրքիոյ պատմութեան խնամեալ համառօտութիւն մ'է այս, գրուած մաքուր աշխարհաբարով, և վաւերացուած Ուսում. Խորհուրդէն։ Հայ մանկտին, հայ ազգին պատմութեան կոկիկ դասագրքի մը հետ, զոր կը պարտի Գարագաշեան էֆէնտիի, նաև կ'ունենայ Օսմ. ազգին պատմութեան կոկիկ դասագիրք մը, աշխատասիրութեամբ Միքայէլ էֆէնտիի, որ պաշտօնական բազմազբաղ վիճակին մէջ, ժամանակ կը գտնէ օգտակար հեղինակութեամբք զբաղելու, ինչպէս է ֆրանքօ-թուրք երկհատոր Բառարանն, «Ղունեէթ-իւլ-Լուղաթ» անուամբ ծանօթ։

Մեր համոզումն է թէ, ժամանակիս կրթական ու նիւթական պահանջներուն միտ դնելով, մեր վարժարանաց մէջ տղայքը շատ ժամավաճառ ընելու չենք պատմութեան ու գրականութեան ուսումներով։ Ասոնք արդարև հմտութեան կարևոր ճիւղեր են, բայց այնպիսի ճիւղեր, զորս պէտք կամ կոչում ունեցողը կրնայ և պարտի առանձինն ուսանիլ դպրոցի նախնական ընթացքներէն ետք։ Մաթեմադիքական և բնական գիտութեանց, եւրոպական լեզուի մը և երկրին ...

[illegible]

... մութեան և աշխարհագրութեան ամենէն աւելի Ֆրանսայի պատմութիւնը, Ֆրանսայի աշխարհագրութիւնն, համդերձ մանրամասն ծանօթութեամբք հայրենի երկրին բնրոց և արհեստական ...

[illegible]

... տպագրութեանց արժանանալու, տարակոյս չունինք թէ նոր տպագրութիւնք քիչ մը աւելի ճոխ պիտի լինին, աւելի համաձայն լինելու համար վերև պարզուած նկատողութեանց, որոց հիմնաւորութիւնը շատ դիւրաւ կրնայ գնահատել Միքայէլ էֆէնտիի պէս ուշիմ պաշտօնէի մը մշակեալ իմացականութիւնը։

## ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

### ՊՈՒԼԿԱՐԱԿԱՆ ՏԱԳՆԱՊԸ

Աւասիկ, ըստ մասնաւոր տեղեկութեանց, անուանք մի քանի ընտրեալ անդամոց Մեծ Սոպրանիէին ի Սոֆիա, 1,800 քուէներէն 1,700 առայած են Պ. Ստամպուլոֆ, Խնամակալ, նախարարք Պ. Ռատոսլաւոֆ և Իվանչոֆ, և չորս պուլկար քաղաքացիք։ Պ. Քարավէլոֆ, որոյ դէմ կատակ կա, թէ Ռուսիոյ յարեալ է, 17 քուէէ աւելի չէ կրցած առնալ։ Պ. Ստամպուլոֆ ընտրուած է նաև ի Փիլիպէ։ Ի Ռուսճուգ, 20ի դէմ ...

[illegible]

—)( 58 )(—

### ԹԵՐԹՕՆ ԱՐԵՒԵԼՔԻ

## ԺՈՒԼ ՎԵՐՆ

## ՔՍԱՆ ՀԱԶԱՐ ՓԱՐՍԱԽ ԾՈՎԵՐՈՒՆ ՏԱԿ

### ԹԱՐԳՄԱՆԵԱԼ Ի ՖՐԱՆՍԱԿԱՆ ՃԵՄԱՐԱՆԷՆ

#### ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ

#### ԳԼՈՒԽ Ա.

#### ՀՆԴԻԿ ՈՎԿԷԱՆ

Ասկէ զատ, օդին անխախտ բարեխառնութեան մէջ հարբուխէ իսկ երկիւղ չկար, թէ եւ Տէնդըրֆիլէ կոչուած քարամայրային բոյսն, որ Բրովանսի մէջ «ծովու սամիթ» անուամբ ծանօթ է, եւ յորմէ բաւական մթերք մը կար նաւուն մէջ, Պոլիպոդաց դիւրահալ միսին հետ խառնուելով դեղագոյն դեղ մը կ'ընծայէր հազի դէմ։

Քանի մ'օր շարունակ բազմաթիւ ջրային թռչուններ տեսանք, թաղանթոտներ, ...

[illegible]

